ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՊԱՇՏՊԱՆԵ՛Ք ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի շրջանակներում՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի միջոցով:

Սույն բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ին, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ՊԱՇՏՊԱՆԵՔ

ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
Հայաստան, Երևան 0025, Այգեստան, 9-րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374 10 569910, 553069
Ֆաքս՝ +374 10 571399
info@transparency.am
www.transparency.am
Երևան, 2011

Ձեր բնակավայրին հարող կանաչ տարածքում նախատեսվո՞ւմ է կառուցապատում:

Կտրո՞ւմ կամ վնասո՞ւմ են ծառերն ու թփերը:

Ցանկապատե՞լ են տարածքը:

Քանդո՞ւմ են խաղահրապարակը:

Ոչնչացվո՞ւմ է Ձեր հանգստի գոտին:

Վտանգվա՞ծ է Ձեր բնակարանի լուսավորությունը:

Կարծում եք, որ կառուցապատումն անօրինակա՞ն է:

ՀԻՇԵ՛Ք.

Դուք ունեք սահմանադրական իրավունք ապրելու առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում, և պետությունը պարտավոր է ապահովել իր քաղաքացիների այս իրավունքի իրականացումը:

ԱՅՍՊԻՍԻՆ Է ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



* Ծանոթություն. կառուցապատում կարելի է իրականացնել բացառապես *-ով նշված փաստաթղթերի առկայության դեպքում:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ՝

- տեղեկանալու Ձեր կենսագործունեության միջավայրում (օր.՝ բնակավայր, ուսման ու աշխատանքի վայր) նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ՝ նախքան պետական կառույցների կողմից դրանց վերաբերյալ որոշման ընդունումը.
- ստանալու տարածքի կառուցապատմանն առնչվող քաղաքաշինական փաստաթղթերը.
- իրազեկվելու շրջակա միջավայրին հասցվող վնասի մասին.
- մասնակցելու իրավասու կառույցների և կառուցապատողի կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին ու լսումներին.
- ներկայացնելու կարծիք, առաջարկություն, դիտողություն, անհամաձայնություն կառուցապատման կապակցությամբ՝ հիմնավորելով Ձեր տեսակետը:

Ձեր վերոնշյալ իրավունքները չիրացնելու դեպքում կարող եք՝

- բողոքարկել Ձեր իրավունքը ոտնահարող վարչական ակտերը վերադասության կարգով.
- վիճարկել Ձեր իրավունքը ոտնահարող վարչական ակտերը դատական մարմիններում.
- ներկայացնել հանցագործության մասին հաղորդումներ իրավապահ մարմիններին:

ԻՐԱՑՐԵ՛Ք
Ձեր իրավունքները:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՔԵՐՆ ԵՆ

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 33.2

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:

«ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա)

Հոդված 6

Պետական մարմինները պետք է ապահովեն շահագրգիռ հասարակայնության վաղ մասնակցության հնարավորություն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նախագծերի վերաբերյալ մինչև դրանց վերաբերյալ որոշումների ընդունումը՝ երաշխավորելով պատշաճ, ժամանակին և արդյունավետ ծանուցում, տրամադրելով ողջամիջ ժամկետներ մասնակցության համար և հաշվի առնելով հասարակայնության կողմից ներկայացված կարծիքները:

Հոդված 7

Պետական մարմինները պետք է ապահովեն շահագրգիռ հասարակայնության վաղ մասնակցության հնարավորություն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող պլանների, ծրագրերի ու քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում՝ տրամադրելով ողջամիտ ժամկետներ մասնակցության համար և հաշվի առնելով հասարակայնության կողմից ներկայացված կարծիքները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք

Բնապահպանական կամ շրջակա միջավայր վրա ազդեցության փորձաքննություն իրականացվում է քաղաքաշինական հայեցակարգերի (պլանների/ծրագրերի/քաղաքականության) և 1500 քմ ու ավելի կառուցապատման մակերեսով շենքերի, կառույցների, համալիրների և այլ կառույցների նախագծերի համար, ինչպես նաև՝ բենզակայանների, խոշոր սպասարկման օբյեկտների (առևտրի կենտրոն, տոնավաճառ, հյուրանոցային ու զբոսաշրջային համալիր, հանրային սննդի օբյեկտ) համար:

Հայեցակարգերի բնապահպանական փորձաքննության շրջանակում իրականացվում է առնվազն մեկ հանրային լսում՝ հայեցակարգի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Հոդված 15

Հայեցակարգ ներկայացնողը պարտավոր է կազմակերպել հայեցակարգի հասարակական լսումներ և հաշվի առնել հասարակական կարծիքը:

Հայեցակարգ ներկայացնողը, համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ, հաստատված կարգով ապահովում է հայեցակարգի և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության գնահատման հրապարակումը նախատեսվող հասարակական լսումներից առնվազն 30 օր առաջ:

Նախագծերի բնապահպանական փորձաքննության շրջանակում կազմակերպվում է առնվազն երեք հանրային լսում՝

- քաղաքաշինական գործունեության կառուցապատման մտադրության մասին.
- քաղաքաշինական գործունեության նախագծային փաստաթղթերի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության մասին.
- բնապահպանական փորձաքննության գործընթացում ներգրավված փորձագետների մասնագիտական կարծիքների մասին:

Այս երեք փուլերն իրականացվում են հետևյալ ընթացակարգով՝

Հոդված 6

Կառուցապատողն իր մտադրության մասին ծանուցում է լիազորված մարմնին (ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ):

Ծանուցումը ստանալուց հետո՝ 7-օրյա ժամկետում լիազորված մարմինն իրազեկում է (մամուլի միջոցով) ազդակիր համայնքի ղեկավարներին ու հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին:

Ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լսումների տեղի և ժամկետի մասին:

Ազդակիր համայնքի կամ հասարակայնության կողմից 30-օրյա ժամկետում առաջարկներ չստանալու դեպքում՝ լիազորված մարմինը ազդակիր համայնքի կարծիքը համարում է դրական:

Հոդված 8

Նախագծային, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության վերաբերյալ փաստաթղթերը ձեռնարկողի կողմից ստանալուց հետո՝ լիազորված մարմինը դրանց օրինակները դարձյալ տրամադրում է մարզի կամ համայնքի ղեկավարներին, համապատասխան պետական մարմնին և ազդակիր համայնքին:

Ազդակիր համայնքի ղեկավարը 5-օրյա ժամկետում լրատվական միջոցներով տեղեկացնում է, թե որտե՞ղ և ե՞րբ է հնարավոր ծանոթանալ և տվյալներ ստանալ (գրավոր կամ բանավոր) նախագծային փաստաթղթերի մասին:

Լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրության հնարավորություն և լսումների կազմակերպում:

Հասարակայնության կարծիքը նշված ժամանակամիջոցում ներկայացվում է ազդակիր համայնքի ղեկավարներին կամ անմիջապես լիազորված մարմին:

30 օրը լրանալուց հետո՝ ազդակիր համայնքի ղեկավարը հասարակայնության կարծիքը 10-օրյա ժամկետում ներկայացնում է լիազորված մարմին:

Հոդված 9

Փաստաթղթերը ստանալուց հետո՝ 70-օրյա ժամկետում լիազորված մարմինը լիազորված անձանց (կազմակերպություններ, խմբեր, գիտնականներ, առանձին բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք մասնագիտական եզրակացություն մշակելու համար ունեն մասնագիտական իրավասության հավաստագիր) միջոցով ապահովում է փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության մշակում: Մասնագիտական եզրակացության մշակման ընթացքում հաշվի են առնվում հասարակական, ազդակիր համայնքի և համապատասխան պետական մարմինների կարծիքները:

Հոդված 10

Մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում լիազորված մարմինն ապահովում է մասնագիտական եզրակացության, հասարակական կարծիքի, համայնքի ղեկավարի, համայնքի և համապատասխան պետական մարմինների կարծիքների վերաբերյալ հասարակական լսման անցկացում:

Լիազորված մարմինն առնվազն 7 օր առաջ գրավոր իրազեկում է ձեռնարկողին, մարզի կամ համայնքի ղեկավարներին, ազդակիր համայնքներին, համապատասխան պետական մարմիններին և լիազորված անձանց հասարակական լսումների ժամկետի և անցման տեղի մասին:

Վերը նշված լիազորված անձիք լիազորված մարմնի կողմից ստանում են հասարակական լսումների արդյունքների արձանագրությունը:

Հոդված 11

Լիազորված մարմինը փորձաքննական եզրակացություն տալու մասին որոշումը կայացնում է՝ հիմք ընդունելով մասնագիտական եզրակացության և հասարակական լսումների արդյունքների արձանագրությունները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք

Հոդված 13

Քաղաքացիներն իրավունք ունեն՝ ստանալ ստույգ տեղեկություններ իրենց կենսագործունեության միջավայրում ծրագրավորող փոփոխությունների մասին:

- մինչև հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի հաստատումը՝ մասնակցել դրանց քննարկմանը, ներկայացնել իրավական և նորմատիվ ակտերով հիմնավորված դիտողություններ, առաջարկություններ, այլընտրանքային նախագծեր և ծրագրեր.
- հրապարակված քաղաքաշինական ծրագրերը և նախագծերը սեփական միջոցներով ենթարկել անկախ փորձաքննության:

Հոդված 14

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներում հրապարակումներով, հասարակական քննարկումներով, ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով իրազեկել ֆիզիկական և իրավաբանական անձանց կենսագործունեության միջավայրի, տարածքի գոտևորման և քաղաքաշինական նախատեսվող այլ փոփոխությունների մասին:

«Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգ»

(սահմանված է ՀՀ կառավարության 28.10.1998թ. 660 որոշմամբ)

Համայնքի վարչական տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնությանն իրազեկում է համայնքի ղեկավարը՝ Երևան քաղաքում՝ քաղաքապետը, իսկ համայնքի վարչական սահմաններից դուրս՝ պետական կառավարման տարածքային մարմինը՝ մարզպետը:

Իրազեկումն իրականացվում է զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով, ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, տեղական ինքնակառավարման մարմինների ինտերնետային կայքերում տեղադրմամբ և հասարակական քննարկումներով:

Համայնքի ղեկավարն իր համաձայնեցմանը ներկայացված քաղաքաշինական ծրագրերը և նախագծերը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանց մասին իրազեկում է հասարակայնությանը՝ նշելով այդ փաստաթղթերին ծանոթանալու պայմանները՝ հրապարակման, ցուցադրման և հասարակական քննարկման տեղն ու ժամանակը:

Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման և ցուցադրման ժամկետը 15 աշխատանքային օր է:

Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են համապատասխան համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

«Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմեր
(սահմանված է ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. N 11-Ն հրամանով, փոփոխված՝ 01.03.2011թ.)

Մինչև շինարարության սկիզբը՝ հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի (այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի) կամ մեկ այլ առավել տեսանելի տեղամասում տեղադրվում են պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները, ներառյալ՝

- անվանումը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը.
- ծրագրի անվանումն ու նպատակային նշանակությունը.
- շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետները.

ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների դեպքում, ի լրումն վերը նշվածի, տեղադրվում է՝

- շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ՝ մինչև ավարտված շինարարության փաստագրումը դրանք՝ պահպանելու պայմանով:

Եթե խախտվում են Ձեր վերը նշված իրավունքները,

ԴԻՄԵ՛Ք

համապատասխան կառույցներին՝ պահանջելով կատարել իրենց պարտականությունները:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝

Տեղական ինքնակառավարման մարմին (Երևան քաղաքում՝ նաև վարչական շրջանի ղեկավար Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ)[1]

- տեղեկացնել հասարակայնությանը կենսագործունեության միջավայրի նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ (օրինակ՝ ծրագրերի և նախագծերի հրապարակման ու ցուցադրման, զանգվածային լրատվամիջոցում հայտարարության միջոցով) նախքան կառուցապատման վերաբերյալ որոշման ընդունումը.
- ապահովել հասարակական քննարկման անցկացում՝ ներկայացնելու առաջարկվող քաղաքաշինական ծրագիրը/նախագիծը և լսելու հասարակայնության կարծիքը.
- ընդունել համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին՝ հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ դիտողությունների, առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում.
- մասնակցել բնապահպանական փորձաքննության շրջանակներում իրականացվող հասարակական լսումների կազմակերպմանը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ[2]

- ծանուցել քաղաքաշինական ծրագրի կամ նախագծի իրականացման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասի մասին.
- քաղաքաշինական ծրագրի ներկայացման համար կազմակերպել առնվազն մեկ հասարակական լսում.
- քաղաքաշինական նախագծի ներկայացման համար կազմակերպել առնվազն 3 հասարակական լսում.
- բնապահպանական փորձաքննական եզրակացությունը կազմելիս՝ հաշվի առնել շահագրգիռ կողմերի կարծիքները.
- ընդունված որոշման մասին ծանուցել շահագրգիռ կողմերին:

ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչություն[3]

- իրականացնել անկողմնակալ վերահսկողություն բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.
- բնապահպանական օրենսդրության խախտում հայտնաբերելիս օրենքով սահմանված դեպքերում և կարգով անցկացնել քննություն.
- օրենսդրությամբ սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտներին տալ հանձնարարականներ, կասեցնել, դադարեցնել, արգելել նրանց գործողությունները.
- ներկայացնել միջնորդագրեր լիազորված մարմիններին՝ բնապահպանության ոլորտում տրված լիցենզիաների, պայմանագրերի, թույլտվությունների, արտոնագրերի ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու վերաբերյալ.
- մասամբ կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա

[1] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «Երևան քաղաքի մասին» ՀՀ օրենք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք
[2] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք
[3] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք

նախատեսվող գործունեության իրականացումը փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում՝ մինչև փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը.

- հանցագործության հատկանիշներով բնապահպանական օրենսդրության խախտման դեպքերի մասին իրազեկել իրավապահ մարմիններին:

ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչություն[4]

- ուսումնասիրել իրականացվող քաղաքաշինական գործունեության համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին.
- ուսումնասիրել ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տալու համապատասխանությունը ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերին.
- ուսումնասիրել շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման գործընթացի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին.
- ուսումնասիրել կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթացը.
- ուսումնասիրել շինարարության (քանդման) թույլտվության առկայությունը և տրման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների պահանջներին.
- ուսումնասիրել ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին.
- ուսումնասիրել ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման, քաղաքաշինական գործունեությանն առնչվող այլ գործընթացներ.
- իրականացնել ստուգումներ շինարարական օբյեկտներում՝ աշխատանքներ իրականացնող սուբյեկտների գործունեությունը վերահսկելու, իրականացվող շինարարության որակը, քաղաքաշինական փաստաթղթերի, իրավական ակտերի և նորմատիվատեխնիկական պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով.
- իրականացնել ստուգումներ կառուցվող և շահագործվող շենքերում ու շինություններում, մարդկանց և կենսագործունեության միջավայրի անվտանգությանը սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև քաղաքացիների դիմում և բողոքների, հասարակական կազմակերպությունների, հեղինակային ու տեխնիկական հսկողություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության լիցենզավորման իրավասու մարմնի, այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումների հիման վրա.
- իրավախախտումների բացահայտման դեպքերում կիրառել վարչական տույժեր.
- ներկայացնել առաջարկություններ քաղաքաշինական գործունեության լիցենզավորման իրավասու մարմին՝ իրավախախտում թույլ տված շինարարական աշխատանքներ իրականացնող սուբյեկտների լիցենզիաների գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ.
- օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտումներ թույլ տված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասին.

[4] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, «Քաղաքաշինության ոլորտում իրավախախտումների մասին» ՀՀ օրենք

ՀՀ ոստիկանություն[5]

- ձեռնարկել միջոցներ շրջակա միջավայրի պահպանության և բնակչության էկոլոգիական անվտանգության համար.
- կասեցնել իրավախախտում թույլ տվող անձանց հակաիրավական գործողությունները, կազմել վարչական իրավախախտումների մասին արձանագրություն և անհրաժեշտության դեպքում դրանք ուղարկել ըստ ենթակայության.
- հանցագործության դեպքում օրենքով սահմանված կարգով հարուցել քրեական գործ և իրականացնել նախաքննություն:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն[6]

- օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցել քրեական գործ և իրականացնել նախաքննություն օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ՝ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների գործերով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան[7]

- ուսումնասիրել ներկայացվող բողոքները.
- ներկայացնել դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները.
- բողոք ներկայացնողի համաձայնությամբ՝ բողոքը փոխանցել իրավասու պետական մարմիններ:

Բոլոր կառույցներ[8]

- պատասխանել քաղաքացիների կողմից ներկայացվող դիմումներին.
  - 5 օրում՝ տեղեկատվության մասին հարցմանը.
  - 30 օրում՝ դիմումներին և բողոքներին.
  - 10 օրում՝ հանցագործության մասին հաղորդմանը:

---

[5] «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք
[6] «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք
[7] «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, որում ամրագրված են ՄԻՊ-ի լիազորությունները
[8] «Ցեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝

Քաղաքաշինության բնագավառում[9]

- կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.
- մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ.
- քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ ընթացիկ նորոգման աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.
- քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններից.
- ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ քաղաքաշինական գործունեության օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանները.
- ապահովել իրենց քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը.
- ապահովել քաղաքաշինական նախագծային փաստաթղթերի շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցումը.
- պահպանել հեղինակային իրավունքի նորմերը, ապահովել քաղաքաշինական օբյեկտի նախագծի գործնական իրականացման ընթացքում հեղինակային հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով, եթե նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով այլ բան նախատեսված չէ.
- ապահովել քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով.
- կառուցապատումն ավարտել տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով հաշվարկված ու շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում և ապահովել ավարտված շինարարական օբյեկտի շահագործման փաստագրումը:

Արգելվում է շինարարության իրականացումն առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի:

Բնապահպանության բնագավառում[10]

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության դեպքում գործունեության ձեռնարկողը և հայեցակարգային փաստաթղթեր ներկայացնողը պատասխանատու են՝

- բնապահպանական փորձաքննության ենթակա նախագծերը և հայեցակարգերը ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ ներկայացնելու.
- նախագծային բոլոր փուլերում բնապահպանական պահանջների պահպանման և այդ նպատակով անհրաժեշտ աշխատանքների ու հետազոտությունների ֆինանսավորման.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ներկայացված նյութերի համակողմանիության, գիտական հիմնավորվածության, որակի և ստույգության.
- նախագծային լուծումների էկոլոգիական հետևանքների.
- փորձաքննության ներկայացվող նյութերի ամբողջականության, ինչպես նաև անհրաժեշտ լրացուցիչ նյութերի և փաստաթղթերի ներկայացման.
- փորձաքննական եզրակացության պահանջների կատարման.
- նախատեսվող գործունեությունը կամ հայեցակարգը հասարակայնությանը ներկայացնելու համար:

Արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը ենթակա գործունեության իրականացումն առանց դրական փորձաքննական եզրակացության:

[9] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք
[10] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՊԱՏԺԵԼԻ ԵՆ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

Հոդված 94.1

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացումն առանց փորձաքննական դրական եզրակացության՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

Տուգանքի նշանակման օրվանից մեկ-ամսյա ժամկետում համապատասխան փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով փորձաքննության չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինսնապատիկի չափով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության փորձաքննական պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

Հոդված 154.1

Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ նոր սահմանված ժամկետում, կառուցապատումը չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի տասը տոկոսի չափով:

Հոդված 157.1

Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին սահմանված կարգով հասարակությանը չիրազեկելն առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 157.2.

Սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելն՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 157.3.

Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից կառուցապատողներին օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմաններ տրամադրելու կարգը խախտելը կամ ոչ հավաստի տվյալներ տրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 157.5.

Ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծեր համաձայնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հոդված 157.6

Շինարարության և քանդման թույլտվություններ տալու սահմանված կարգի խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 157.7

Կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 157.8

Շինարարության ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կամ ընդունման նորմերի, ինչպես նաև ստանդարտների խախտումներ թույլ տալը, եթե դրանք չեն ազդում շենքի, շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, ինչպես նաև վտանգավոր չեն մարդկանց կամ շրջակա միջավայրի համար և կարող են վերացվել առանց դադարեցնելու տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներ թույլ տալը, եթե դրանք կարող են ազդել շենքի, շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, ինչպես նաև վտանգավոր են մարդկանց կամ շրջակա միջավայրի համար և չեն կարող վերացվել առանց դադարեցնելու տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներ թույլ տալը, եթե դրանք հանգեցրել են տեխնիկական վթարների՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Հոդված 157.9

Տեխնիկական հսկողություն իրականացնողների կողմից քաղաքաշինական պետական տեսչությանը շինարարությունում տեխնիկական վթարների մասին քառասունութ ժամվա ընթացքում լիազորված մարմնի սահմանված կարգով տեղյակ չպահելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական հսկողություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 157.10

Քաղաքաշինական պետական տեսչության տեսուչին ստուգվող օբյեկտ մուտք գործել արգելելը կամ տեսչության կողմից տրված պարտադիր կատարման ցուցումները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Հոդված 157.11

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հոդված 157.14

Օրենքով սահմանված դեպքերում կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որի չկատարման համար նշանակվել էր տույժը:

ՀՀ քրեական օրենսգիրք

Հոդված 315.1

Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը և (կամ) անօրինական կառույցները չքանդելը, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածով քրեական պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ նույն արարքի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝ համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի:

Հոդված 315.2

Պաշտոնատար անձանց կողմից, որոնց վրա իրավական ակտերով դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականությունը, հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոցներ դիտավորությամբ չձեռնարկելը, ինչպես նաև հողամասերը ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները դիտավորությամբ չկիրառելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով, կամ ազատազրկմամբ մեկից երկու տարի ժամկետով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով:

ԴՈՒՔ Ի ՁՈՐՈՒ ԵՔ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- ինքնակազմակերպվեք և դրսևորեք քաղաքացիական դիրքորոշում
- հարցումներ արեք պետական կառույցներին՝ պահանջելով կառուցապատման համար անհրաժեշտ փաստաթղթերը
- դիմումներ հղեք համայնքի ղեկավարին, ոստիկանությանը, քաղաքաշինական տեսչությանը, բնապահպանական տեսչությանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, Ձեր ընտրատարածքի պատգամավորին
- մասնակցեք հասարակական քննարկումներին ու լսումներին
- ինքներդ նախաձեռնեք հասարակական քննարկումներ ու լսումներ
- առաջարկեք այլընտրանքային ծրագիր/նախագիծ
- կազմակերպեք անկախ փորձաքննություն
- անցկացրեք ակցիաներ՝ ցույցեր, ստորագրահավաք, ծառատունկ
- կազմակերպեք քարոզարշավ լրատվամիջոցների կամ սոցիալական ցանցերի միջոցով

ՁԵՐ ԽՆԴԻՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Ա1+	585427	www.a1+.am
Ազատություն	544047	www.azatutyun.am
Էկոլուր	527003	www.ecolur.org
Հետք	580219	www.hetq.am
Լրագիր	574986	www.lragir.am
Պանորամա	547275	www.panorama.am
Ռիփորթ	539122	www.report.am

ԱՀԱՁԱՆԳԵ՛Ք ԻՐԱՎԱՍՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

Երևանի քաղաքապետարան	Երևան, Արգիշտիի 1 514152, 514187 Թեժ գիծ՝ 514263, 514264
«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ	Երևան, Կոմիտասի 26 220218
Քաղաքաշինական պետական տեսչություն	Երևան, Կառավարության 3-րդ տուն 583303
Բնապահպանական պետական տեսչություն	Երևան, Կառավարության 3-րդ տուն Թեժ գիծ՝ 266172, 519182, 523835
ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն	Երևան, Նալբանդյան 130 560263
Մարդու իրավունքների պաշտպան	Երևան, Պուշկինի 56ա 537651, 538842

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որոշումների ընդունման գործընթացը - 4
Ձեր իրավունքները - 5
Ձեր իրավունքի հիմքերը - 6
Պետական կառույցների պարտականությունները - - - - - - - - - - - - - - - 10
Կառուցապատողների պարտականությունները - - - - - - - - - - - - - - - - 13
Իրավախախտումների համար պատասխանատվությունը - - - - - - - - - 14
Ձեր կողմից ձեռնարկվող քայլերը - 17
Անհրաժեշտ հեռախոսահամարները - 18



ԵՐԵՎԱՆ 2011